

ՏԻՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ե. Բ. ՈՐՈՍՍԻԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրու թիւն պետք է ուղղել առ

Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ յրազրի

ԳԱՆԻՐԷ (Նախախառնի)

Թի.


E. TOROSSIAN

Direct.-prop. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԿ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐՐ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե.Գ.ԹՏՈՍԻ ՀԱՐԱՐ	
Տարեկան ողջ դահլիճ.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Տրակի	20
Վեցամսեայ »	12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿԱՆՈՒԿ ԵՒ ԹՂԹԱՍՈՐԻ ԺԱԽՔՐ ԽՈՐԱԳՐՈՒՔԻԱՆ ՎՐԱՅ Է :

ԽՈՐԱԳՐՈՒՔԻԱՆ ՈՂՂՈՒՄ ԳՐՈՒՔԻՆԷՍ ԵՍ ԶՆԵ ՏՐՈՒՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ ԿՈՆԻՐԻԿ ՎՃԱՐԵԼԻ ԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԲԵՐԸ

ՈՐԲԵՐԸ

Բ.

(Շարժ. նախորդ թիւէն)

Սրէ և թրէ հալածական տարաբազդ ժողովուրդ մը շուար, կամ ուշակորոյս կ'ըլլայ, և ով որ գէտը եղնէ, և զինքը ինամեն ձեռքնէ, կուրաբար կը հաւատայ, և առանց խելամոռութեան կը հետեւի անոր մինչև ի կորուստ. ճիշտ այնպէս, ինչպէս երկիւղով պաշարուած անձ մը ինքզինքը վտանգէ զերծ պահելու համար խաբէրայի մը զթալիր խօսքերուն կը հաւատայ և անոր թակարգը կ'իյնայ. ա՛լ անկէ ետե ինչ օգուտ գիտնալ թէ՛ իւր վրայ գլխադր արեւարբու մ'էր, ան խիզճ աւազակ մ'էր, մարդու կերպարանօք խմբուած ամբարշտ մ'էր, սրուն սիրտը արեամբ կը սնանի, արցունքով կը պարարի, և հաւատացելոց աւերակայք վրայ բարձրանալով միայն կը հրճուի :

Նկարագրածս սատանայ մը չ'է, այլ առաւել քան զ'սատանայ, մարդասպան մը չ'է, այլ առաւել քան զ'մարդասպան, վերջապէս Աստուածուբայ մը չ'է, այլ առաւել քան զ'Աստուածուբայ :

Մեր ողորմելի ազգը ճանկի անողոք հարուածոցը տակ երկար տարիներէ հետէ մինչ վերջին տարիներս ա՛յնչպիսի հարստահարութիւն, ա՛յնչպիսի ջարդ, և ա՛յնչպիսի հալածանք կրեց, որ յամենայնէ լքեալ շուարեցաւ, և այն մեղալից ձեռքը որ իւր պաշտեցեալ եկեղեցին պիտի կործանէր, ուշակորոյս վիճակի մէջ համբուրեց զանի, ճշմարիտ քրիստոնեայ կարծեց զանի, և յետ այնորիկ որի ձեռքը որ խաչ և աւետարան տեսաւ, գառնուկներու պէս գիւնց կորստեան սպանդարանը, ուր մահ, կործանում և կորուստ ոսկի տառերով գրուած են :

Եւ որու բերնէն որ գլխարտութեան և մարդասիրութեան խաբէրայ խօսքերը լսեց, փարեցաւ անոր, գերեզմանը գտնակ մը կարծեց, և ինկաւ մէջը, հոս է ցաւալի կէտը, և հոս է ոչ միայն հայոց, այլ և նոյն իսկ քրիստոնէութեան անկումը : Վասնզի հայր նկատելով որ քրիստոնեայ եւրոպան յանուն քրիստոնէութեան, որ անխորապէս պէտք է նոյնն ըլլալ ըստ Պօղոս առաքելոյն թէ՛ «չիւր

խտիր ո՛չ հրէի, ո՛չ հեթանոսի, ո՛չ աւուրի, և ոչ իգի, զի ամենեքին դուք մի էք ի Գրիստոս Յիսուս» . Հայերը պաշտպանեալու ելան. Լոնտրայի, Ամերիկայի, Գաղղիոյ, Գերմանիոյ և Հոլանտայի եւ այլն. քրիստոնեայ երկիրներու մէջ միթիւններ կազմեցին, սրտառուչ ձուեր արտասանեցին. փիլիսոփայն հառաչեց, գրագէտը հայոց իրաւունք տալ ձեռքուց, և մինչև իսկ փափուկ անուանեալ իզական սեռը արատուեց բեմերու վրայ. բայց ի վերայ այս ամենայնի տեսանք որ ամենն ալ գերասանութիւն են, զի ուր ուրեմն վարագոյրը բացուեցաւ և ահա ճարտիկ դերասանները սկսան խաղալ. կազ էջով քաղց ճանկատան, Ամերիկա, Անգլիա, Գաղիա, իւրաքանչիւրը սկսաւ իւր գերը կատարել : Ճանկատան սուր ի ձեռքն սկսաւ մուհամմէտին արտու առաջնորդել քրիստոնեայ հայր. բայց պէտք է գիտնալ որ այս պարագային մէջ ներքի է տանկին հակառակի եղողները նախաջի հրաւիրել. Ամերիկան, կամ որ նոյն է Անգլիան, որպէս թէ միայն ինքը քրիստոնեայ ըլլար, և տէրջը լիազօր փոխանորդը, սկսաւ քրիստոնեայ հաւաքել անստոյգ քրիստոնէութեան աշխարհին մէջ, ուրիշ մը թէ՛ և կրօնափոխ եղիք չ'ըսեր, բայց այնպիսի անտանելի վիճակի մը մէջ կը զնէ հայերը, որ կամայ ակամայ օրթօթօթութեան ազգակուլ կրօնքին հնազանդին, իսկ գալով Գաղիոյ մեծ գերասանին, այն ալ բեմն ելաւ, և ամենէն մեծ գերը խաղաց. ի հանդէս բերելով հայր Շարմիթան իբրև կատարեալ քրիստոնեայ, իբրև ծայրայեղ մարդասէր մը, և իբրև գլխութեան հրեշտակ, որ նշանաւոր մարդորս մ'եղաւ և ուր որ անօթութիւն տեսաւ հոն վազեց, ուր որ արցունք և հառաչանք նշմարեց, հոն փութաց, և գլխութեան թաշկինակ ի ձեռքն մէկուն արցունքը սրբեց, մէկուն հաց և մէկուն մորմոքիչ սրտին սփոփանք տալով բազմաթիւ որբեր իւրեց յուսահատ, մայրերու խանգակաթ գրկէն, գորովագութ հայրերու որդեկորով սրտէն, հարազատ եղբայրներու սիրալիր գրկէն, և ողորմելի Հայաստանի անուշիկ հողիէն :

Ա՛յս ինչպէս չարատու են այս վշտակիր աշկունքս, և ինչպէս հոգեոց չ'հանեմ բուրբ էութեանս գոյութենէն, երբ մէկ կողմէն մեր անտարբերութիւնը և միւս կողմէն թշնամեայն անողոք հարուածները կը տեսնեմ, այն է մեծ հին և փառասպանած ազգ մը բաժնել, կործանել, և իսպառ ջնջել ձեռնարկած են :

Եթէ հաւ մը ունենայի, պիտի ցաւէի անոր կորստեանը վրայ, բա՛նք, ինչպէս չ'ցաւիմ հայ որբերուն աղեխարչ կացութեանը վրայ, որ այսօր անմեղ գառնուկներու պէս գազաններու բերանը ինկած բզբտուելու ահարկու վտանգին մասնուած են :

Աստուած, միայն աստուած պիտի կրնայ փրկել խեղճուկ որբիկները, որ անգէտ են իրենց գեղեղակ բազդին ու կորուսիչ վտանգին. այո՛, հայր Շարմիթան Աստուծոյ ծայրագոյն պաշտօնեան, աւելի ճիշտ է ըսել Աստուծոյ ծայրագոյն նախատինքը, դառի կերպարանօք գայլի մը պէս մտաւ հայ գառնուկներուն մէջ՝ և տարաու պիտի տոնի դեռ բազմաթիւ որբեր Հոռոմի փարախը, ճիշտ այնպէս ինչպէս աւազակներ կերթան քաղաք կամ գիւղ կը կողոպտեն, և կողոպտուին կը բերեն կը յանձնեն իրենց սուղակապետին, ուրկէ բնականաբար իրենց անձնական շահերը ունին, և այնու օրրոտօրէ պիտի յառաջդիմեն բարձրանան մարդորսութեան աստիճանին մէջ : Այո Շարմիթան ճակատաբաց կը ներկայանայ Ս. Պետրոսի աթոռին, և որբուկները ( եղճիկ իրենց ) կը շարէ նորին աստուածավայել քահանայապետութեան պատկառելի առնին առջև թիւրտի մը պէս, որ գաւառացի հայուն գուարը քշելով կը տանի, և թիւրտ պէ՛ր մը կը յանձնէ, այսպէս մեր անմեղ գառնուկները Հոռոմայ փարախը կը լեցնէ ըսելով «Վանէն, Բարձր Հայրէն 30,000 հայեր պաշտօնապէս կաթողիկ արձանագրուած են պէտք է օգնել Յիսուսի Գրիստոսի փարախը բերելու համար զանոնք» :

(Շարունակելի) II.

Մ Ո Ռ Ց Ո Ւ Ա Ս Տ Ա Ր Ը

Ուրբափեղով գահավիժող գիշերը կը հեւայ, խաւարը կը հայածուի, երազները կը մարին. առջալոյսը կը ծագի, արեգակը հրաչէկ շանթի մը նման նեղոսի մէջ կ'իյնայ. եւ ահա այժմէութեան ինք մատուխ քանիները Գահիբէի մասայ կ'լիւսային տակ ապրող բարդ ու բազմապունակ խուկերուն գլխուն վերեւ ազմկելով կը ճառագայթեն : Թէ որո՞նք են այժմէութեան այդ ինք մատուխ քանիները, Շրջուն Ընթերցատունը հանրային կեանքէն խալտ քաշող տիպար գէւըքը, Գալստեան վարժարանի նորընտիր հոգաբարձուներուն հրաժարականը, առաջնորդին «անճարակ» չոգենաւով զրգ գուշիսին տալ՞քը. սպա-

սեղը, տալիս մեր ընկերութիւնները, բացը մնացող գերատնտեսները. սինդիկատական մասնախազիրը. չ'իջուկի տարեկարծը. պարբերական բաց նամակները:

Օրուան նորածեղութիւններն են ասոնք, որոնք կարծես միջավայրին ազդեցութիւնէն ներշնչուած՝ առեն օր, առաւօտները կը յղանան, ցերեկները կը ծնին, իսկ երեկոյնները կը մեռնին:

Օնորէ ար Պալլար, մարդկային կասկեղարքեան հեղինակ մը միայն անբարեխիղճ չ'զանուելով, պիտի կարողանար սոյն մեր այժմէութեան կատարեալ լիւրջի գոհացում ապ:

Մօլիէր, Լապիշ, տեն օր մէկ մէկ արարուածով զանեղաներ պիտի նետէին հըրապարակի վրայ. « Ազգային ջոջեր » ու հեղինակը եթէ ողջ ըլլար, անկիջապէս « թիվ-փիթ ըստպանի » շոգենաւով պիտի փութար գէպի փարաւոնեան աշխարհը, ուր՝ երգիծանքի նոր երկինք մը պարզուած՝ եւ նոր արեւներ թաւալած պիտի տեսնէր:

Կեանքի պարահանդէսին մէջը կը գտնուինք այժմ. մեր դէմքերը գիւտեղանով ծածկած օրն ի բուն պարտպին մէջ կը պարենք զարնուելով, քշուելով, պտուարելով խալարս:

Անա թէ ի՞նչեր կան Գահիրէի մէջ...

Չ'գիտցուիր թէ մինչեւ երբ պիտի տեսնէ այս զաւեշտի քնարերգութիւնը:

Օրը օրին նորանոր ինդիւստրիա կը յուզուին հրապարակի վրայ, եւ մենք առանց ս' եւ է որոշ ուղղութեան, յարաբայ միջոց մեր երգը երգելու կը հետաւորինք: Կրթութեան ու դաստիարակութեան գաղտը, ժամանակէ մը ի վեր խոսքն ու աւերակ մնացած է. ոչ ոք կը ջանայ մշակել ու հերկել զանի արգասաբեր ու պողպարի վիճակի մը վերածելու համար:

Պարզենք մեր ըսածը:

Օրուան այժմէութեան նիւթ մատակարարող, եւ գրեթէ անկասկածաբար ու չափակաւ եղող ինդիւստրիան մին ալ Գահիրէի հայ իգական սեռին կրթութեան գործն է, որուն անձան ու անտարաբան տեղեկագիրները բազմաթիւ ժամանակէ մը ի վեր կրթական սեղանին վրայ փոշիներուն մէջ թափուած, լուրջ ուսումնասիրութեան կամ աւելի ճիշտ քննադատութեան մը ենթակայ ըլլալու արժանիքէն զուրկ մնացած են:

Օրուան անպէտ վէճերով զբաղելը, ժամանակէ մը ի վեր անխուսափելի հարկ մը նկատուած է. շատ քիչեր ունեցած ենք որոնք, յաւակնութեան շրջանէն գուրս գալով՝ եւ մի քիչ շրջանայեաց ըլլալու բարեկամացողութիւնը ունենալով՝ յետագործակցարկներ նետած են անցեալի վրայ ու ազդու միջոցներ որոնած են ձաղկելու համար այն ամեն տոնակային թերութիւնները որոնք յառաջդիւրսութեան խոչընդոտներ ըլլալու հանգանակն ունին: Ներքին պիտի ըլլայ անշուշտ քանի որ առիթը բարեկաման է, մի քիչ ալ լրագրութեան վրայ ծանրանալ, որովհետեւ գրեթէ անտարբեր կը գտնուին գէպի կրթական հարցը. ու յետոյ աւելորդ պիտի նկատուի անկից առաջ եկած անբացատրելի չարիքները եւ ձախտագրական տարբերութիւնները պիտի վերագրուի թափուած ճիգերը:

Միևնոյն ատեն որքան տխուր երեւոյթ մ'է, երբ կը տեսնանք թէ՛ կարծես մահաբեր սխալ մը վարակուած է ժողովրդին գէն ու գէնը նոյն իսկ, եւ չ'ուզեր երէք հեռաքրքրուիլ կրթական ինդիւստրիայով:

Մասնաւորելով մեր խօսքը Գահիրէի հայ իգական սեռին կրթութեան եւ դաստիարակութեան գործի մասին, կ'արժէ բաւական կորով զգալ հեռաքրքրուելու, հասկնալ եւ գիտնալու համար թէ՛ ի՞նչ կրնին, ինչո՞վ կ'զբաղին մեր օրիորդները:

Ըստ մեր կարծեաց, գոհացուցիչ պատասխան մը տալու համար, հարկ անհրաժեշտ է որ մարդ մը անպատճառ « վեց հա-

զարեայ » կարգացած ըլլայ, որպէսզի կարողանայ մեր օրիորդներուն գործունէութիւնները, յատկութիւնները ու բարեմասնութիւնները մի աւ մի թուել եւ այդ գաղտնիքին խորը թափանցել:

Առանց սակայն այդ մասնագիտութեան գիւտելու մենք սա չափը միայն գիտենք թէ՛. Գահիրէի Հայ աղջիկները ոչ այնքան օրինակելի տիպարներ են, որքան ուրիշ երկնքի սակ ապրողները. նոս ընտանեկան կրթութեան պակասը խիստ ընտէ, ասոր ալ տեղի տուողները բնականաբար ծնողքներն ու վարժարաններն են:

Ինչպէս յայտնի է, տեղս ունինք նախակրթարան մը կոչուելու հարկը արժանի հաստատութիւն մը, ուր տեղ տարիներէ՛ ի վեր յաճախող աղջիկները իրենց մայրենի լեզուն հռոմեոս կերպով խօսելու եւ գրելու կարողութիւնէն վեր ի վեր կ'զբառնին ֆրանսիացիներն. ուրեմն շատ բնական է թէ միջնակարգ ուսում եւ կրթութիւն ստացող աղջիկներ երբէք չ'պիտի ունենանք, քանի որ վարժարանին սղորակի ծրարները, չը ներքէր երբէք պէտք եղած օգուտները ընձեռելու եւ կը փութայն օրին մէկն ալ տղէտ արարածներ նետել հասարակութեան մէջ:

Արդեօք, կարելի չ'պիտի՞ ըլլայ, սոհւնային դաստիարակութեան օժտուած աղջիկներ հասցնելու ինչպէս այդ սեռին մատուարական մակարդակը բարձրացնելու. համար մեր վարժարանին մէջ հիմնական յեղաշրջումներ մտցնել. Պէտք է գիտնալ թէ՛ ինչ ուր կը փնտռենք երիտասարդներու համար, նոյնն ալ երիտասարդուհիներու համար է: Այլ ժամանակը եկած է ըսելու թէ, արդի երիտասարդութիւնը ուսումնասանջ է. բնականաբար կը փափաքի որ իրեն ընտրելիք ընկերն ալ ժամանակի արդի պահանջներուն համապատասխան կրթուած, դաստիարակուած ըլլայ. մեծաբայ կին մը եւ օգտակար մայր մը ըլլալու անհրաժեշտ պէտքերն մին ալ ուսումն է. Ձեռագիտութեան ձեռագործի զգալի պակաս մ'ալ կայ հոս, աղջիկ մը երբ չափահաս է ալ, պէտք է իր հագուաններուն եւ իր արդուզարդին պէտքերն ինքն հոգայ, պարտականութիւն մը կը նկատենք զայս, որ ամեն դասակարգի աղջկանց սեփական գործը պէտք է ըլլայ, մինչդեռ մեր նորատի օրիորդներն միօրինակ կ'ստիպին իրենց ծնողքները զնախազնիւններու գիւտել, քանի որ իրենք բոլորովին անտեղեկ են երենց հագուանները ձեռելու եւ կարելու գործին մէջ:

Ցաւ է ըսել թէ՛ ատոր ալ պատճառ Գահիրէի հայուհիներն է եղեր որ ժամանակին չէ խորհրդ Գալուտեան վարժարանին աղջկանց բաժնին մէջ արեւտարակական ճիւղ մը հաստատել եւ օգտուիլ նիւթապէս ալ եթէ կարելի ըլլայ զայն հասարակացնել Բերայի աղջկանց արեւտանոցին:

Անշուշտ Պօլսեցիք կը յիշեն Բերայի արեւտանոց վարժարանը. հաստատութիւն մը՝ որ տարիներ բոլորած է, այսօր գրեթէ աշխարհիս չորս կողմը այդ հաստատութիւնէն վիպակալ արեւտանոցներուց ցրուած են, որոնք թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս վարժարութեան կ'արժանանան. օտարները հիացած եւ սքանչացած են իրենց ձեռարուեստներուն վրայ, ինչու սակայն, ինչու Գահիրէն ալ չ'ունենայ այդ կարգի հաստատութիւն մը որ իր պէսպիսի օգուտները ընձեռնէ, միթէ՛ պիտե՞ն չի՛ ներքը. չ'ենք կարծեր...

Քանի որ Գահիրէցի օրիորդը լուրջ ուսումնական մը չէ, ձեռարուեստ մը չ'ունի ուստի ի՞նչ կերպով իր օգտակարութիւնը ցոյց պիտի կրնայ տալ իր շրջանին մէջ, եւ կամ ի՞նչ միջոցներով իւր սեռին պատիւը պիտի բարձրացնէ:

Խօսքս ունեւոր դաստիարակին համար չ'է բնականաբար. քանզի անոնք կարող են մասնաւոր դաստատուներու, մասնագէտներու միջոցաւ իրենց պատկանելու պարտ ու պատ-

շած դաստիարակութիւնը տալ, եթէ այս կարելիութեան սահմանին մէջ ընդունինք. քանի որ դրսի ազնու ամեն ինչ կը խոնարհի:

Գետնիք շատ մը ծնողքներ, որոնք սա գաղտնարին կը ծառայեն թէ՛ բաւական է որ իրենց աղջիկը 15 - 20 տարեկան ըլլայ երեկոյններու մէջ յարաշարժ պարէ, դաշնակ զարնէ եւ ճեփարտսիան ճանաչող մը ընկուչափ ալ ֆրանսերէն խօսի եւ երբ յարմար պարագային երիտասարդին մէջը ամուսնութեան խնդրէ, կարողանան արտաքին փայլով, գրաւով կամ օժիտով հրապուրել զայն:

Մալծնական անպատուութիւններ սակայն սրոնք միշտ ապագան կործանելու կը ծառայեն: Այդ կարգի ծնողքները աւելի փոխ գործ մը ըրած չ'են ըլլար փոխանակ լուծօժիտ մը տալու, լաւ դաստիարակութիւն մը տան եւ միանգամայն հոգածու ըլլան կրթելու իրենց աղջիկները. որովհետեւ արդուզարդի ու պերճանքի այն աստիճան լաքանչացուել չի յայտնուիր, որքան ուսման, կրթութեան, արեւտագիտութեան, տան կուսակարգութեան եւայլն, թողունք այժմ իստրիլը. յօյնն, ֆրանսերէնը եւայլն մէկ կողմ եւ ջանաք մեր աղջիկները նախնական պէտքերով օժտել. ըսել չ'ենք ուզեր թէ՛ ատոր սնուցում պէտքեր են, եթէ հարկը պահանջէ ատոր սը իր կարգին կրնան երկրորդական ատուելութիւններ համարուիլ:

Արեւմտ ջանաք մեր աղջիկներուն լաւ դաստիարակութիւն մը տալով պարտապատշաճ հոգածութիւնն չի զբաղանք անոնց մասին, չ'ունանք երբէք այդ տարբեր որ ապագայ սերունդին պարկեշտ առաքինի ու արժանի մայրեր ըլլալու կոչումն ունին:

Առաքինի յատկութիւններով միանգամայն օժտենք մեր օրիորդները, որովհետեւ առաքինութիւնը մարդկային ազգին անկասարկ եւ նուիրակալ պարտականութիւնն է, որով առաւելագոյն կը ծանրանայ այն զաւակաց վրայ, որոնց դաստիարակութեան շնորհիւ աւելի հոգ ու խնամք տարած են ծնողք: Աշխարհիք արեւմտ սա յոսով թէ՛ օր մը պիտի հրճուինք երբ տեսնանք թէ՛ Գահիրէի հայ իգական սեռին կրթութեան գործը զգալի բարելաւմ մը կրած է:

ՆԵՎՐՈՒՉ

ԱՌ ՕՐԻՈՐԳՎ ԿԻՐՓԻՆ

յԱրեւմտադրիտ

Սիրելի Քոյր իմ

Երբ նստած մէնիկ Գիտէի երկինք, Ար պարզ ու կապոյտ Լուսին ի պտոյտ Շրջէր պանծալի, Ինչպէս թաղուհի, Հարցուցի ո՞վ է Արդեօք լուսինն է. Վերծինն է — ըսին, Աւ թեզ ցցուցին Աւզեցի համբոյր Տալ թեզ սիրարոյր Բայց էիք շնորհն Հրեշտակ իմ սիրուն:

Բիչ մը ձանձրացայ Չորս կողմ շրջեցայ Տեսայ մի անտառ Չով ու սիրավառ Կանանչով լեցուած Դրախտ մէջը կենաց Հոն մեկներ նստէր, Ար սէրը կ'երգէր, Ըսի — Ասողիկն է եւ կամ թէ ո՞վ է Ար նայողն իրեն կը քաշէ մէկէն. Վերծինն է ըսին

Ու քեզ ցցուցին .  
Ու գեցի հաւրոյր .  
Տալ քեզ սիրարոյր .  
Բայց էիր հեռուն  
Հոգեակ իմ սիրուն :

Նոյն ժամ լսեցի  
Գայլալ ստիակի  
Որ մէջ պարտիզին  
Մաղկանց թաղուհին  
Կ'երգէր սիրաձայն .  
Ի աշխարհ տեղնայն  
Ուրախ լսէին  
Երգեր ստիակին .  
Ըսի — Ի՞նչ կուզէ .  
Միթէ վարդ խնդրէ .  
Ոչ . կուզէ — լսին  
Գեղեցիկ վերթին .  
Ու քեզ ցցուցին  
Ո՛վ վարդ մայրսին  
Ու գեցի հաւրոյր  
Տալ քեզ սիրարոյր  
Բայց էիր հեռուն  
Ո՛վ վարդ իմ սիրուն :

Որչափ ալ հեռուն  
Այլ թեւով սիրոյն  
Անա գամ քեզ մօտ  
Առնել իմ կարօտ  
Եւ աւալ քեզ համբոյր  
Անուշիկ իմ քոյր :

Բէրուզ Գ. Սարգսիեան

Գահիրէ

### ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բ. ԽՏԻՎԸ — Կը հաւատեն թէ Ն. Բ. Խափը, սուղիկայ օգոստ. 31 ին Կ. Պօլիս պիտի գտնուի, Սուլթանին գահակալութեան 25 ըզ. տարեդարձի հանդէսներուն ներկայ գտնուելու համար :

— Խափական արքունիքին բարձրատիճան պաշտօնատարներուն մէջ, որք Անգղիոյ Թագուհւոյն կողմէ պատիւներով ընդունուեցան, կը գտնուին Հասան Փաշա Ասրը և Տը Մարթինօ Փաշա, որ Ս. Կեորգի և Ս. Միքայէլի երկրորդ կարգի նշանը ընդունեցին Սըր սիտղոսով : Ահմէտ Փաշա Ձէքի միւսնոյն նշանը ընդունեց՝ բայց ուրիշ կարգէ մը : Շէֆիզ Պէյ, Եսվէր Պէյ, Ազիզ Պէյ Իզզէթ և Տը. Բաուձիկ Պէյ ընդունեցին չորրորդ կարգի Վիզթօրիայի Մէտայլը :

— Ձուրի Ընկերութեան հաւաքիչներու պետերէն և Գահիրէի Հայոց Արքասիրաց Ընկերութեան Գործադիր Ժողովոյ Ատենապետ Մեծ. Տիար Առաքել Պէրպէրեան, եռամեայ արձակուրդով մը ընտանեօք կը բէտէ մեկնեցաւ օգափոխութեան համար :

Որքասիրաց Ընկերութեան Գործ. Ժողովոյ Ատենապետին այս ժամանակուոր բացակայութիւնը, կ'ուզենք հաւատալ թէ չ'պիտի պակսեցնէ եռանգը մնացեալ ընկերներուն և Որքասիրացը միշտ յառաջագէժ չաւղի մը մէջ պիտի մնայ :

ԿԱՅԻՆԱՆ — Երէկ առաւօտ արեւածագէն քիչ յետոյ, ժամը 6 ին, Մանսուր փաշայի հրապարակին վրայ կախաղան բարձրացուցին Ալի Ահմէտ անուն մարդ մը՝ որ Սալիտա Ձէյնապի մէջ աղախին մը սպաննած էր :

Ընդարձակ հրապարակը, հոն հաւաքուած բազմութեան համար շատ նեղ կ'ու-

զար և գլուխներէ կազմուած ալեկոծեալ ովկեանի մը նմանութիւնն ունէր :

Գահիրէի ամեն կողմերէն և ամեն գոտակարգերէն երկու սեռէ ահագին բազմութիւն մը կառքերով և ունանք հետիտան հոն գիմած էին, ոճրագործին վերջին վալրկեանները գիտելու :

Սեաներկ կախաղանը, որ տեսնողին սիրտը ալիմայ կը սարուացնէր, զետեղուած էր հրապարակին մէջ տեղը : Քսանի չափ աստիճաններ ունեցող սանդուխէ մը վեր բարձրացուցին դասապարտեալը, որ երկու վալրկեան վերջ օգածածան գիտի մը վերածուելու սահմանուած էր :

Չարնացական և արգահատանք ազդող շշուկներ ու հառաչներ բազմութեան մէջէն իրարու խառնուած լսուեցաւ և ահա ամեն ինչ ըմբոստ էր . . .

Սե պատասառով մը ծածկուած էր դիակնացած մահապարտին դէմքը :

ՇԱՀԵԿԱՆ ԴԱՏ ՄԸ — Շուեռայի հրպատակ մը սակէ բաւական ատեն առաջ Փօն-Լիմոնի կայարանին մէջ տուրակ մը գտած էր որ կը պարունակէր 367 սակի ու գոհարեղէններ և իսկոյն կառավարութեան իմաց տուած էր . բայց չ'ուզելով իւր գիտը իշխանութեանց յանձնել, կառավարութիւնը այս մարդուն խառն դատարանի առջև դատուիլը պահանջեց, որովհետև տուրակը յանձնելու մերժումը, գտնուած առարկաներու վրայ դրուած օրէնքներու հակառակ է :

### ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Թիւն-Ձին 5 Յուլիս. — Բէքինէն փախած երեք Ձինացի զաղթականներ կը յայտարարեն թէ հազարի չափ օտարականներ ապատանած էին Բրիտանական զեապանատունը, ուր մինչև իրենց ազգամիջերքին սպառու մը գիմագրեցին : Այն ատեն Ձինացիք կրակի տուին զեապանատունն ու բոլոր մէջը գտնուողները այրուեցան :

Կը կարծուի թէ կայսրն ու կայսրուհին թունաւորուած են :

Բարիկ 7 Յուլիս. — Գանթօնի ֆրանսական հրեպատուր կը հեռագրէ թէ Լի-Հունկ-Չանկը իրեն յայտարարած է որ Բէքինի զեապանատունները մինչև Յուլիս 1 յիսանգուած չ'էին :

Թօքթօ 7 Յուլիս — Ճարմական զինուորները շուտով պիտի մեկնին և անմիջապէս Բէքինի վրայ քալելու կը պատրաստուին : Եթէ ինչպէս կը վախցուի, 100,000 մարդու պէտքը չ'զգացուի Ձինու գէժ, հաւանականաբար ճարմն պիտի սղոյէ, որպէսզի տէրութեանց միջև կանխու համաձայնութիւն մը գոյանայ :

Բարիկ 7 Յուլիս — Չորավար Տօքթօ Ձինաստանի ֆրանսական արշաւախումբին հրամանատարութիւնը ստանձնեց :

Աւաշինկիթօն 8 Յուլիս. — Կառավարութիւնը հրաման տուաւ որ 6254 կանոնադր զինուոր ֆրիլպեանները զրկուին, ի հարկին Ձինաստանի վրայ ուղղելու համար :

Լոնտրա 9 Յուլիս. — Շատ մը Եւրոպացի զաղթականներ Թիւն-Ձինէն Թաքթօ հասան և անտի նակասաքի զրկուեցան :

Բիլ 8 Յուլիս. — Գերմանիոյ կայսրը Ձին մեկնող նաւախումբի ժողովակալին շոգե-

նաւը գնաց և ողջերթի բարեմաղթութիւններ բրաւ Սպանիոն և մարդոց :

Բարիկ 8 Յուլիս. — Ռուսական թերթերը ճարմնական զինուորներուն Ձինաստան զրկուելուն համաձայն են :

Լոնտրա 7 Յուլիս. — Չորավար Պուլլըր Բրէթօրիա եկաւ :

Լոնտրա 9 Յուլիս. — Չորավար Պրապան Տօրնպէրկը և Վինպուրկի խումբ մը բըլուրները գրաւեց, ատոնք այնպիսի զիրքեր են, ուրկէ Գօէրնիլը յաճախ յոգնեցուցած են անգլիական զինուորները :

Բարիկ 11 Յուլիս. — Լուր կը չըջի թէ կառավարութիւնը տեղեկացած է Յրանսական և Ամերիկեան զեապաններուն սպաննութիւնը : Փէքինի մէջ օտարականներու գոյութեան վրայ կը տարակուսուի :

Բիլ 9 Յուլիս. — Գերմանական նաւատորմը մեկնեցաւ դէպի Ձին :

Լոնտրա 9 Յուլիս. — Օրանփի պետութեան պետական քարտուղարը երեկ իւր հպատակութիւնը յայտնեց :

Բարիկ 10 Յուլիս. — Մարէն թերթին կողմէ Աարայ գրկուած Պլանչէթի խումբը գերի բռնուեալ է Մալիտանացիներու պետերէն, որոնք հրախրած էին զանոնք իրենց վրաններուն մէջ : Սենեկալի կառավարութիւնը զինուորներ կը զրկէ գերիները ալաւելու համար :

Հետեւեալ գրութիւնը Լսարան — Ընթերցարանի Ընդ. Ժողովոյ անդամներէն երկուքին ստորագրութեամբ, երկու օրինակի վերածուած, մին նոր-Օրի Վարչութեան, եւ միւսը Արշարայի Տնօրինութեան զրկուած է ի հրատարակութիւն :

Պատ. Վարչութիւն նոր-Օրի  
Աստ

« Լսարան — Ընթերցարան » Ընկերութեան դէմ յայտնուած զրոյցները որ օր քան զօր հատարակութեան միւսքերը պղտորելու բնոյթ ունին, ցարդ ոչ մի ճշմարտութիւնով լուսաբանուած չ'ըլլալը շատերու իրաւունք պիտի տայ հաւատալու թէ արգարե կան այնպիսի թերութիւններ, որոց դէմ ժողովրդի կամ ընկերութեան անդամակցողներուն զայրոյթն ու պուշտութիւն ընտան համարուին . և որովհետև Պատ. Վարչութիւնը ստանձնած զեկավարութիւնովը ուղղակի յարաբերութիւն կ'ունենայ նոյն ընկերութեան անուանը յիշարարող թերթի մը հրատարակման . և մենք՝ որովհետև անգամք ենք և նախանձախնդիր մեր վերաբերած ընկերութեան պատուին և արժանավայել յառաջդիմութեանը, խորհեցանք համարձակութիւն առնուլ հրապարակային դիմում մը ընելու որպէսզի Վարչութիւնը շնորհ ընէ մեր հետեւեալ քանի մը հարցմանց պատասխանել :

1. « Լսարան — Ընթերցարան » ընկերութեան առաջին կազմակերպութիւնը օրինաւորապէս տեղի ունենալէ յետոյ, բաւարար եղած են ուն պատճառները, որոցմէ ծագում առած ըլլայ Ատենապետական — Ատենադպտական փոփոխութիւններ ընել Գործ. Ժողովոյ մէջ :

2. Այդ փոփոխութեանց պատճառները, իր բոլոր իսկութեամբը Մայր դիւանին յայտնուելէ յետոյ, դիւանը թոյլց-

որած է նոր Ատենապետական ընտրութիւն Գործարար ժողովոյ մէջ և եթէ թոյլատրած է...

3. Ընդհ. ժողովոյ գիւտնէն պաշտօնապէս ճանչցուած և վաւերացուած է այժմեայ Գործ. ժողովոյ ըստ օրինի կազմութիւնը:

4. Իրաւ է թէ « Լուսարան-Ընթերցատուն » ընկերութեան մայր կանոնադրը Ընդհ. ժողովոյ հաւանութիւնը անգամ մը ենթարկուելէ յետոյ. Գործադիր ժողովը իր կողմէն փոփոխութիւններ մտցուցած ըլլայ անոր մէջ և եթէ այդպէս է, անկէ յետոյ վերստին մատուցուած է Ընդհ. ժողովոյ գիւտնի վաւերացումին. կամ եթէ վաւերացուած է՝ գիւտնի ամբողջ անգամնց ստորագրութեամբ է՝ թէ մէկ կամ երկուքին և ո՛ր թուականաւ:

5. Այժմեայ սրբազրեալ կանոնադրը նախորդ խմբագրեալին հետ բազմապատկան ինչ ձև և ո՛րպիսի հանգամանք առած է և առաջնոյն ու վերջնոյն մէջ Գործ. ժողովոյ իրաւասութիւններն պահած են իրենց բնական ուղղութիւնները:

Լոկ ասոնց պատասխանները անթերի միջոցաւ հրատարակուելէ յետոյ վստահ ենք որ այլևս ոչ մի պատճառ ու զրոյց չպիտի կարողանայ պատուարեր հաստատութեան մը գէժ հանրութեան միտքն ու համոզումը խանգարել ու խախտել. և արդէն Պատ. վարչութեանց արտագին բազմանքները բնաւ հեռի չլինելով այսպիսի անկողմնակալ նպատակի մը գոհացումին և օրինաւոր դատուելուն, կ'սպասենք վարչութեանց պատասխանին:

Լուսարան - Ընթերցատուն Ընկերութեան անդամներէն Երկու Ստորագրութիւնը

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒ ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աջակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդադրուել ու զրոյցներն, կրնան դիմել Արշալոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

Տիար Մ. Հայկունի Բարիզ ուղեւորելուն պատճառաւ, իւր հրատարակած «Վարագոյր Մարդկային կենաց» գրքին սակաւթիւ օրինակներն յանձնած է Արշալոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ: Գնել փափաքողք կրնան հոն դիմել:

Գանի մը օրինակ մէկ անգամէն գնողին 20 առ հարիւր զեղ իր լինի:

Հեկվանի վիճակաւ ՀԱՆՈՒԹԻՒՆԻ ԿԻՐԱԿԻ 8 ՅՈՒՆԻՍ 1900

Table with 7 columns of numbers: 200 2350 8945 6106 1604 711 1850 2071 2581 2691 2631 2514 3706 4915 4950 5231 5513 5806 5921 6370 6173 6671 6449 7077 8869 9371 9918

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

« ԱՐՇԱԼՈՅՍԻ »

Հիմնաւ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻՁԻ ՍԿԻՁԲԸ

Օտանկիյէ դեղատանին դիւնացի փողոցին մեջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարեալակներ, Իրիտեր, Հրաւիրագրեր, Մահալղեր, Տեղեկագիրներ, Կաւենագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագրութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ:

ԿՈՊԵՌ ՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ.

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՋԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐԱՋԱՏՈՒՆ

Տասնեկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլահ Եղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպէֆիյէ Շարխա Գաւնէլ Օթէլ ՇէֆէթՏՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 աբարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրսը կուտիներ ի հարկին:

Ակրսէֆաւան բնական մեծութեամբ Կենդանադիրներամերիկեան մեքենայով սրոնք երբէք չեն աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միլեւաքիտ:

Իւզաների եւ ջրաների պատկերներ և ընդ լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ոչքոչ, ճեփեղբորման եւն:

Իրեն գիմող յաճախողներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԳՐԱՍԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարձինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատարանց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընտրութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼէՕնար ընդհանուր ներկայացուցիչ իԳահիրէ

ՏՕՔԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԻԱՆ

Ի Շարխա Գոր-Պեյ, թիւ 20

Իր ՁԻԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե. ) 9 էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղը աղքատ հիւանդներու:

Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիգրան Կոստանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փողար-Մուրի խանութին մէջ պատրաստել Եֆէնի սուրճին ամենաորոշիւր և անխարդախ տեսակէն իրեն գիմող յաճախողներ օխան 16 զըշ ողջի հաշուով, զուտ ֆաւէ պիտի կրնան գնել կշռոյ մէջ ալ ուղղափառութիւն գտնելով:

ԳՐԻՔ ՈՒՅՈՂ ՆԵՐՈՒՆ

Գահիրէի և չըվակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտք կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իստական, Գրոցական, Գիտական, Իրական Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նուասարգեանի, Գալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐՓ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՍՏՄԵԱՐՈՅԺ Ապսիկ Շարխա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար բնորոշ ապրանքներով կեղծակուաներ:

Կը գաղթեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն ստիւնութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամեն օր կէսօրէ կաք ժամը 5—5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Աղեքսանդրիա: